Մեղրաշեն

Վարչական ղեկավար՝ Հունան Պետրոսյան

Հեռ: 093 99 99 61

Մակերես՝ 11,9կմ²

Բնակչություն՝ 1250

Ինդեքս՝ 3017

mexrashen2011@mail.ru

Արագած լեռան հյուսիսային ստորոտում, ծովի մակարդակից 1600մ բարձրության վրա, Լենինական-Պեմզաշեն երկաթուղու ճյուղավորության ձախակողմյան հարթավայրում տարածված բնակավայրերից է Հյուրասեր, Ղազանչի այժմ՝ Մեղրաշեն գյուղը:Նախկին Ղազանչին Մեղրաշեն է վերանվանվել 31.05.1946թ: Գյուղը հիմնադրվել է 1828-1829թթ ,ազգաբնակչության հիմնական մասը տեղափոխվել է պատմական Հայաստանի Բասենից , Կարսից և Մուշից իրենց հետ բերելով շատ գեղեցիկ ավանդույթներ և սովորույթներ , որոնք արդիական են բոլոր ժամանակների համար: Մեղրաշենը գտնվում է Արթիկ քաղաքից 8.3 կմ , մարզկենտրոնից (Գյումրի քաղաք) 25 կմ և մայրաքաղաքից (Երևան քաղաք) 120 կմ հեռավորության վրա, սահմանակից է Մուսայելյան, Ջրառատ, Արևիկ, Այգաբաց, Վարդաքար և Փանիկ գյուղերին: Գյուղում առկա է բուժ ամբուլատորյաի կետ, Հայ փոստի բաժամունք որոնք գործում են գյուղապետարանի շենքում, բարեկարկգված դպրոց, մանկապարտեզի և արվեստի դպրոցի շենք, առկա է ոռոգման համակարգ Կառնուտի ջրամբարից սնվող , ինչպես նաև

Մանթաշի ջրամբարից սնվող, նոր անցկացված խմելու ջրի ցանց, ապահովված է գազով, ինտերնետ և ֆիքսված հեռախոսակապերով: Մեղրաշենցիները ակտիվ մասնակցություն է ունեցել Երկրորդ համաշխարային պատերազմին և Արցախյան ազատամարտին, որոնց հիշատակը հավերժացնելու համար գյուղում տեղադրված է հուշարձան և խաչքար-հուշարձան: Գյուղում պահպանվել է՝ նոր ժամանակների Սուրբ Աստվածածին եկեղեցին,որը կառուցվել է անհայտ սրբի գերեզմանի վրա և գերեզմանը կոչվում է «Լույս գերեզման» ըստ մեզ հասած ավանդազրույցների գերեզմանում գտնվող մարմինը անփուտ է: Շրջակայքում կան պահպանված Չավալու, Մանասի խարաբեք, Աբրահամի խարաբա կոչվող գյուղատեղիներ, , դամբարաններ, գերեզմանոցներ, որոնք կարող են գրավել զբոսաշրջիկների և հնեագետների ուշադրությունը: